

2. Տիպարանություն

Ֆիզիկական անձանց կողմից կատարվող դրամական փոխանցումների կիրառությամբ ապօրինի ձեռնարկատիրական գործունեության և հարկերից խուսափելու արդյունքում ձևավորված միջոցների շրջանառության և օրինականացման սխեմա

1) Սխեմայի նկարագիրը


Տվյալ սխեմայով իրականացվող գործարքները հիմնականում իրենց մեջ պարունակում են միջոցների հոսքի հետևյալ ուղղությունը՝ ֆիզիկական անձի կողմից միջոցների փոխանցում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձին: Միջոցների հոսքի այս ուղղությունը հիմնականում կապված է ներմուծման գործարքների հետ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներկրմամբ զբաղվող կազմակերպությունը ներմուծված ապրանքները հայտարարագրում և մաքսագերծում է ոչ ամբողջ ծավալով, ինչը նաև նշանակում է, որ այդ ապրանքների չհայտարարագրված մասի իրացումը կատարվում է ստվերում (չի բացահայտվում կազմակերպության հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերում): Ապրանքների դիմաց վճարում կատարելու համար, ընկերությունը, չհայտարարագրված ապրանքների իրացումից գոյացած միջոցները շահագրգիռ ֆիզիկական անձի միջոցով (ֆիզիկական անձի անունից կամ նրա բանկային հաշվով) փոխանցում է այն կազմակերպությանը, որից ապրանքը ներկրվել էր: Որպես խոշորածավալ փոխանցումների փաստաթղթային հիմք ներկայացվում են փոխառության, արժեթղթերի առուվաճառքի ստանդարտ պայմանագրեր, կամ որպես նպատակ ուղղակիորեն նշվում է «պարտքի մարում», «պարտավորությունների փոխհաշվարկ» և այլն, կամ ներկայացվում են իրավաբանական անձանց անունով հաշիվ ապրանքագրեր:

Միևնույն սխեման դիտվում է նաև այն դեպքերում, երբ ապրանքների ներմուծմամբ զբաղվում է ֆիզիկական անձը: Ներմուծված ապրանքների մաքսագերծումը իրականացվում է այդ նպատակով ստեղծված «մասնագիտացված» (այսպես կոչված՝ «մեկօրյա կյանք ունեցող», «թուղթ վաճառող») կազմակերպությունների անունով, իսկ դրանց դիմաց վճարումը կատարվում է ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող հաշիվներով (կամ առանց հաշվի բացման՝ արագ փոխանցումների համակարգերով):

Վերը նկարագրված գործարքներն իրենցից ներկայացնում են ապրանքների ներմուծման հետ կապված ձեռնարկատիրական գործունեության ստվերային

շրջանառության ֆինանսավորում և ուղղված են տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարման ենթակա ուղղակի և անուղղակի հարկերից խուսափմանը:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. Ներմուծող կազմակերպությունը Մատակարարից գնում և Հայաստան է տեղափոխում ապրանքներ,

բ. Ներմուծվող ապրանքի մի մասը օրինական կերպով հայտարարագրվում և մաքսազերծվում է,

գ. Ներմուծվող ապրանքի մնացած մասը ներմուծվում է «զարտուղի» ճանապարհներով և չի հայտարարագրվում/ մաքսազերծվում,

դ. Օրինական կերպով հայտարարագրված և մաքսազերծված ապրանքների վաճառքից գոյացած գումարը կազմակերպության բանկային հաշիվներով օրինական կերպով փոխանցվում է մատակարարին՝ ներկայացնելով վճարման օրինաչափությունը հիմնավորող փաստաթղթերը,

ե. Չհայտարարագրված/մաքսազերծված ապրանքների վաճառքից գոյացած գումարը շահագրգիռ անձանց կողմից հաշվի բացմամբ կամ առանց հաշվի բացման (որոշ դեպքերում՝ արագ փոխանցումների համակարգերով) փոխանցվում է մատակարարին՝ որպես վճարման փաստաթղթային հիմք ներկայացնելով

փոխառության, արժեթղթերի առուվաճառքի ստանդարտ պայմանագրեր, կամ որպես նպատակ ուղղակիորեն նշվում է «պարտքի մարում», «պարտավորությունների փոխհաշվարկ» և այլն, կամ ներկայացվում են իրավաբանական անձանց անունով հաշիվ ապրանքագրեր:

3) Եզրահանգում

Վերը նկարագրված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու, ինչպես նաև հարկային պարտավորություններից խուսափելու, տնտեսական գործունեության իրական ծավալները թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **ֆինանսական հաստատության միջոցով իրականացվող այն փոխանցումները, որոնց նախաձեռնողները հանդիսանում են ֆիզիկական, իսկ շահառուները՝ իրավաբանական անձինք, ուշադրություն դարձնելով շահառու կազմակերպության ռեզիդենտությանը, քանզի դա կարող է հուշել թե արդյոք վճարումը կատարվում է ներմուծված ապրանքների դիմաց, և ճշտելով նախաձեռնող ֆիզիկական անձի առնչությունը որևէ գործարար բնագավառի հետ:**

